ԱՐՓԻՆԵ ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

ԴԻԱՐԲԵՔԻՐ (ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ) ՆԱՀԱՆԳԻ ԲԱԼՈՒ ԳԱՎԱՌԱԿԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1878-1895 ԹԹ.

Բանալի բառեր *– Բալու, Դիարբեքիր, Տիգրանակերտ, Արևմտյան Հայաստան, Տերոյանց, ժողովրդագրություն, հայերի թվաքանակ, Պաղին, Հավավ*

1880-ական թվականներին, երբ տարբեր ձևափոխություններից հետո ճշգրտվեցին Արևմտյան Հայաստանի նահանգների սահմանները, Բալուն դարձավ Դիարբեքիրի նահանգի Արղանա Մադեն գավառի առանձին գավառակ: Պատմականորեն այս տարածքը համապատասխանում էր Ծոփքի՝ Չորրորդ Հայքի Բալահովիտ և մասամբ՝ Պաղնատուն գավառներին: Խարբերդ, Մեզրե բնակավայրերը նրան ավելի մոտ էին, քան Դիարբեքիրը, հետևաբար սոցիալ-տնտեսական, մշակութային առումներով այն սերտորեն կապված էր հենց Խարբերդի գավառակին:

Բալու գավառակը բաժանված էր ինը նահիեի (գյուղախմբի)՝ Յուն, Խարապիկին, Սարաջուր, Աշմուշատ (Աշտիշատ), Պուլանըք, Գարաչոր, Մազրուաթ, Կէօքտիրի, Օխու: Աշմուշատում հայաբնակ էր վեց գյուղ, Գարաչորում՝ ինը, որոնց մեծ մասը Մազրուաթի նահիեում էին, կային նաև Օխիում և Պուլանըքում: Բալու գավառակը, ըստ Մ. Տերոյանցի, ուներ 248 գյուղ, որոնցից միայն 48-ում էին հայեր ապրում[1]: Ավելին, Ս. Ծոցիկյանը շեշտում է այն փաստը, որ նշված 48 գյուղերը զուտ հայաբնակ էին: Դրանցից գլխավորներն էին՝ Խօշմաթ, Հպըղի, Ձեթ, Խարակետուկ, Կուլիշկերտ, Ուզուն Օվա, Արմճա, Ներխի, Ապրանք կամ Ապարանք, Սղամ, Դավիթ Միրզա, Նաճարան, Գամպաթ, Շնազ, Տավաճի, Գարտրպօրք, Պաղին, Բիրան, Լըճե, Հանի, Թերիգան, Էկիլի, Հասան Օպա, Իսապեկ, Խաճար, Միջոմամրզա, Նոր Գիւղ, Սագրատ, Հաւաւ («Բալուի Աթէնքը կոչուած, որ բազմաթիւ հայ մտաւորականներ տուած է»), Օխու գյուղերը[2]: Կարծում ենք՝ Ս. Ծոցիկյանը չափազանցրել է այդ 48 գյուղերի զուտ հայաբնակ լինելը, քանի որ ժամանակակից այլ հեղինակներ զուտ հայաբնակ են հիշատակում միայն 20-ը: Մասնավորապես, Բալուի առաջնորդական, այն է՝ եկեղեցական, թեմական վիճակը, ըստ դրա առաջնորդ Պ. Նաթանյանի, ընդգրկում էր 46 գյուղ, որից

[1] Տե՛ս **Տերոյեանց Մ**., Բալու // «Արաքս», 1897, մայիս, թիվ 2, էջ 40:
[2] Տե՛ս **Ծոցիկեան Ս**., Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 1947, էջ 119:

զուտ հայաբնակ էին 26-ը, մյուսներն ունեին խառը բնակչություն[1]: Ավելին, նա նշում է Բալուի յուրաքանչյուր բնակավայրի հայության թվաքանակը, առանձնացնում զուտ հայաբնակ գյուղերը (տե՛ս աղյուսակը)[2]:

Կանգ առնենք Բալուի գավառակի հայ բնակչության թվաքանակին առնչվող ամբողջական տվյալներից մի քանիսի վրա: Բրիտանացի աշխարհագրագետ և ճանապարհորդ Հ. Լինչը, որը Հայաստանի վերաբերյալ պատմաաշխարհագրական կարևոր ուսումնասիրության հեղինակ է, Դիարբեքիրի նահանգից ներկայացնում է միայն Բալուի գավառակի վիճակագրությունը, որը վերցրել էր բրիտանացի փոխհյուպատոս Թոմաս Բոյաջյանից: Ըստ դրա՝ Բալուի բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 60 730-ի, որից 45 580-ը մուսուլմաններ էին, իսկ 15 150-ը՝ հայեր[3]: «Արաքս» պարբերականում հրատարակված հոդվածներից մեկում մեջբերվում են կառավարության մարդահամարի տվյալները. Բալուի հայ բնակիչների թվաքանակը 23 000 էր[4]:

Այս ժամանակաշրջանին վերաբերող մեկ այլ արժեքավոր ուսումնասիրության հեղինակ է ռուս զինվորական, 1884-1889 թթ. Վանում ռուսական փոխհյուպատոս Ա. Մ. Կոլյուբակինը, որն անդրադարձել է Էրզրումի, Խարբերդի, Բիթլիսի մի շարք բնակավայրերին, մասնակիորեն նաև Բալու գավառակի բնակչության թվաքանակին և տնտեսական կյանքին առնչվող խնդիրներին: Բալու գավառակում, ըստ նրա տվյալների, նշված ժամանակաշրջանում ապրում էր 79 686 մարդ (12 894 ընտանիք): Հայերն ունեին 2977 տուն և բնակչության 23 %-ն էին, իսկ 1657 տուն ունեցող թուրքերը և 8268 տուն ունեցող քրդերը՝ համապատասխանաբար բնակչության 12,8 %-ը և 64,2 %-ն էին: Քրիստոնյաները բնակչության 23%-ն էին, իսկ մուսուլմանները՝ 77 %-ը[5]: Փաստորեն, ըստ Ա. Մ. Կոլյուբակինի տվյալների, Բալուի գավառակում 1880-ական թվականներին բնակվում էր ավելի քան 20 000 հայ:

XIX դարի վերջերին Բալուի գավառակն առանձնանում էր հայաշատ բնակչությամբ: Այն պահպանում էր ժողովրդական սովորություններն ու բարքերը, լեզուն և կրոնը: Բալուի ժողովուրդը թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում խոսում էր մայրենի լեզվով:

Ինչպես Արևմտյան Հայաստանի այլ բնակավայրերում, այստեղ ևս հայերը տիրապետում էին անհրաժեշտ բոլոր արհեստներին, որոնցից զարգացած էր հատկապես կոշկակարությունը. նրանց արտադրանքը նաև արտահանվում էր: Բալուում բամբակագործությունը նույնպես զարգացած էր,

---

[1] Տե՛ս **Նաթանեան Պ.**, Արտօսր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանճազի, Ճապաղ Ջուրի եւ Երզնկայու, Կ. Պոլիս [աշխատանքն անթվակիր է], էջ 60, 95:

[2] Բնակչության թվաքանակի վերաբերյալ նրա տվյալները տե՛ս ստորև տեղադրված աղյուսակում:

[3] Տե՛ս **Lynch H.**, Armenia. Travels and Studies, vol. 2. The Turkish Provinces, London, 1901, p. 413:

[4] Տե՛ս **Տերոյեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 30:

[5] Տե՛ս **Колюбакин А.**, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. III, ч. I, Тифлис, 1891, с. 293:

բամբակն արտահանվում էր մասնավորապես Եվդոկիա և այլ բնակավայրեր[1]: Մանուսայագործության գործարանատերերն էին Պալյան և Ֆառիշյան եղբայրները, որոնց արտադրանքը՝ մանուսան ու կտավը, պահանջված էր Խարբերդում, Դիարբեքիրում, Քղիում, Ճապաղջուրում, Մուշում, Չարսանջակում: Միևնույն ժամանակ, Մ. Տերոյանցը հավելում է, որ Բալուում «թուրքերը գրեթէ հայոցմէ երիցս շատ են, բայց բոլորն էլ առանց արհեստի են կամ թափառաշրջիկ, կամ այգեպան, պարտէզպան և մրգավաճառ»[2]:

Գավառակի հայության շրջանում զարգացած էր նաև երկրագործությունը. մշակում էին ցորեն, գարի, բամբակ, շուշմա, կտավատ, ոսպ, սիսեռ, խաղող, գինի, զբաղվում անասնապահությամբ: Բալուն բերրիության առումով Խարբերդի, Բերրիի, Արաբկիրի, մի քանի այլ բնակավայրերի շարքում առաջիններից էր: Հողերը, սակայն, ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս բնակավայրերում, այստեղ ևս պատկանում էին աղաներին ու բեյերին: Այդ մասին փաստում է Գ. Սրվանձտյանցը. ըստ նրա տվյալների՝ Բալուի 460 գյուղերից 30-ը վագըֆ էր. գյուղացին իր միջոցներով մշակում էր հողը, որը պատկանում էր բեյին, ստանում բերք, որի տասանորդը տալուց հետո մեկ բաժինն իրեն էր պահում, մեկուկեսը տալիս բեյին, բայց «տեղ տեղ ալ կայ, որ՝ տասնէն ութն ինքն կառնու եւ երկուք աղային կուտայ»[3]:

Տեղանքն առանձնանում էր նաև արծաթի ու պղնձի հանքերով: Մազրուաթի գլխավոր հայաբնակ Հավավում (Հապապում) գյուղում, ինչպես նաև Արդիխան և Խամըշլի հայաբնակ գյուղերի մոտ կային քարհանքեր: Յունի նահիեի Ազրակ (Ազարակ) գյուղի մոտ կար բրուտագործության համար որակյալ կավ, որից գյուղացիները պատրաստում էին գեղեցիկ անոթներ: Այս գյուղից երեքչորս ժամ հեռավորության վրա կար նաև արծաթի հանք: Մեծ պաշարներ կային նաև Հոսանք ու Վանք լեռներում, որոնք չէին շահագործվում[4]:

Հարկ է նշել, որ թեև Բալուն XIX դարի վերջերին համարվում էր հայաշատ կենտրոն՝ շրջապատված զուտ հայաբնակ կամ խառը բնակչությամբ գյուղերով, սակայն նախկինում հայերի թվաքանակն այստեղ թերևս եղել է գերակշռող: Նրանց թվաքանակի նվազեցման պատճառն արտագաղթն էր, սակայն խոսքն այս դեպքում ոչ թե կայսրության սահմաններից դուրս գաղթին, այլ երկրի ներսում՝ այլ բնակավայրերում հաստատվելու հայության տեղաշարժերի մասին է: Հայտնի է, որ XIX դարի վերջերին Արևմտյան Հայաստանի որոշ բնակավայրերից դեպի ԱՄՆ արտագաղթը ևս մեծացավ: Դիարբեքիրի նահանգից ԱՄՆ արտագաղթողները ի համեմատ հարևան Խարբերդի շատ չէին: Իսկ Բալուից մեկնողները քիչ են եղել, հետևաբար հետագայում ևս նրանց թվաքանակը չէր կարող էապես ավելանալ:

---

[1] Տե՛ս **Տերոյեանց Մ**., նշվ. աշխ., էջ 42:

[2] Նույն տեղում:

[3] **Սրուանձտեանց Գ**., Թորոս Աղբար Հայաստանի ճամփորդ, մաս Բ, 1885, էջ 169, 170:

[4] Տե՛ս **Տերոյեանց Մ**., նշվ. աշխ., էջ 40:

Դիարբեքիրի նահանգի հայ բնակչության շրջանում առավել ակտիվ էին ներքին տեղաշարժերը: Հատկապես շատ էին Բալուն լքողները, ինչը, թերևս, պայմանավորված էր Խարբերդում տիրող աշխույժ կյանքով, միսիոներների ազդեցությամբ: Դա անապահով, բազմաթիվ զրկանքներ կրող բնակիչների, հատկապես գյուղացիների համար ավելի բարեկեցիկ կյանք ունենալու հույսեր էր արթնացնում: Եվ ինչպես խարբերդցիները, Բալու գավառակի հայության մի մասը ևս բոլոր դժբախտություններից փրկվելու ելքը փնտրում էր այլ վայրերում: Մ. Տերոյանցը գրում է. «Պատմութեան նայելով Բալուն հնումը մօտ 100 000 բնակիչ է ունեցել և Աշտիշատի մէջ ամենամեծ և առաջին քաղաքն է եղած: Նոյն իսկ սորանից 70-80 տարի առաջ Բալուի բնակիչների թիւը յանգելիս է եղել 30 000-ի, ինչպէս որ կը պատմեն տեղացի ծերունիները: 1870 թուից սկսեալ հայ ազգաբնակութիւնը օր ըստ օրէ կը նուազի. գաղթականութիւնը հիմք գտած է այստեղ և կը շարունակուի. գաղթող հայերի երրորդ մասին չափ հազիւ թուրքեր կաւելանան, որոնք կը գան նմանապէս Ճապաղջուրի շրջակայքից, Խարբերդից և այլ կողմերից: Հայոց թաղերի հարաւային գերեզմանի կողմը դեռ կերևին հազարաւոր տների կիսաւեր պատերը, իսկ արևելեան կողմը Արածանիի եզերքին մօտաւորապէս 40 րոպէի տեղ բոլորովին յայտնի է, որ քաղաքին ստորին մասերն են եղել քիչ ժամանակ առաջ»[1]: Խոսքը ոչ միայն քաղաքի, այլ նաև շրջակա գյուղական բնակավայրերի մասին էր, քանի որ, ինչպես Արևմտյան Հայաստանի այլ բնակավայրերում, Բալուի գավառակում ևս բազմաթիվ էին նախկինում հայաբնակ գյուղերը, որոնք ժամանակի ընթացքում հայաթափվել էին և դարձել քրդաբնակ ու թրքաբնակ: Նշենք սակայն, որ այդ գյուղերից շատերը պահպանել էին իրենց հայկական անվանումները, օրինակ՝ Օշին, Գոմեր, Սուրբ Սարգիս (քրդական ձևափոխումներով՝ Սըմ Սարգիս), Վարդագոմ, Ալիրտուն, Սահման, Ջրափ, Հոսանք, Մերավան և այլն[2]:

Պ. Նաթանյանը ևս անդրադառնում է ժողովրդագրական փոփոխությունների այս միտումին՝ նշելով, որ Բալուից պանդխտության մեկնողների հիմնական ուղղությունը եղել է Կ. Պոլիսը: Նա գաղթի պատճառ է համարում հարստահարությունները և ծանր հարկերը[3]: Միաժամանակ նա նշում է Բալուի անապահովության մասին. այնտեղ գիշերը թե ցերեկը հաճախ հրացանի կրակոցներ էին լսվում, իսկ հետո պարզվում էր, որ կողոպտվել է որևէ հայի տուն, կամ հայ է սպանվել[4]: Մեկ այլ իրողություն ևս կարելի է դիտարկել որպես ծննդավայրը թողնելու ազդակ: Բալու քաղաքի մասին Գ. Սրվանձտյանցը գրում է. «Օդն ու ջուրը խիստ ծանր է այս քաղաքին, եւ մարդիկ դեղնած, գրեթէ ճերմակ մազերով մէկը չես տեսներ, քիչեր կան, որ

---

[1] **Տերոյեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 38:
[2] Տե՛ս **Պատմութիւն Պաղնատան**, Պոսթըն, 1966, էջ 17:
[3] Տե՛ս **Նաթանեան Պ.**, նշվ. աշխ., էջ 56:
[4] Նույն տեղում, էջ 51:

յիսուն տարին լրացնելէն զկնի մեռնին»[1]: Ի տարբերություն քաղաքի՝ գյուղերի բնակիչները, ըստ նրա, լիովին առողջ էին և ապրում էին բնականոն կյանքով: Բալուից հեռացողների մեջ շատ էին ճարտար արհեստավորները, ճարտարագետները: Գ. Սրվանձտյանցը նշում է հատկապես Կ. Պոլիս հեռացած արևմտահայերի մասին. «Բալուայ գեղերու հայերը մեծաւ մասամբ թէ ի Պոլիս եւ թէ ի գաւառս ճարտարապետ, հիւսն եւ որմնադիր են, իրենց տեղն ալ այգեգործ եւ երկրագործ, Պոլսոյ ազգայնոց մէջ նշանաւոր անձինք եւ գերդաստաններ կան ծանօթ՝ Բալուայ հովիտէն»[2]: XIX դարի 70-ական թվականներից Բալուից ակտիվացած գաղթի մյուս ուղղություններն էին նախ Ադանան, այնուհետև Խարբերդը, Դիարբեքիրը, Սեբաստիան, Մալաթիան ու Քղին:

Այժմ անդրադառնանք առանձին բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ եղած տվյալներին: Գավառակի կենտրոն Բալուն ուներ չորս հայկական թաղամասեր, ինչպես նաև՝ չորս (Ս. Լուսավորիչ, Ս. Աստվածածին, Ս. Կիրակոս, Ս. Սահակ) եկեղեցի: Կարևոր սրբատեղի էր նաև Բալուի բերդում գտնվող այն քարայրը, որտեղ ճգնել էր Մեսրոպ Մաշտոցն ու ստեղծել հայկական գրերը:

Եկեղեցիներից յուրաքանչյուրն ուներ կալվածքներ և դպրոց: Մասնավորապես, Ս. Լուսավորիչ եկեղեցին ուներ հինգ խանութ և 10 կալվածք, նաև դպրոց՝ 150-ից ավելի աշակերտներով, Ս. Սահակ եկեղեցին՝ վեց խանութ և չորս կալվածք: Ս. Կիրակոս եկեղեցին թեև գտնվում էր խարխուլ վիճակում, սակայն ուներ երկու խանութ և 50 000 դահեկան դրամ: Բալուի Ս. Աստվածածին եկեղեցին, ըստ Պ. Նաթանյանի, ուներ 10 սեփական խանութ և 100 000 դահեկան դրամ, որն ամեն տարի 2000 դահեկան օգուտ էր բերում: Եկեղեցուն կից գործում էր դպրոց՝ 100-ից ավելի աշակերտներով[3]:

Ըստ Ս. Էփրիկյանի՝ Բալուն 1880 թ. ուներ մոտ 5000 հայ բնակիչ, իսկ 1885 թ. հայերի տների թիվը հասնում էր 550-ի[4]: Նա հղում է նաև մեկ այլ հեղինակի, որի կարծիքով Բալուն ուներ 2600 հայ բնակիչ: Հավանաբար նա նկատի է ունեցել Մ. Տերոյանցին, որի կարծիքով՝ Բալու գյուղաքաղաքն ուներ 2500 հայ և 7500 թուրք բնակիչներ[5]: Գ. Սրվանձտյանցի տվյալների համաձայն՝ այն ուներ 550 տուն հայ, քաղաքում գործում էր չորս վարժարան, որտեղ ուսանում էին 200 տղա և 20 աղջիկ[6]: Ինչ վերաբերում է վարժարանների և աշակերտների թվաքանակին, ապա ըստ մեկ այլ սկզբնաղբյուրի, որի տվյալները վերաբերում են արդեն 1890-ական թվականներին, քաղաքում գործում էին երկու երկ-

---

[1] Տե՛ս **Սրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 158:

[2] Նույն տեղում, էջ 164:

[3] Տե՛ս **Նաթանեան Պ.**, նշվ. աշխ., էջ 34-37:

[4] Տե՛ս **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Ս. Ղազար, 1903, էջ 373:

[5] Տե՛ս **Տերոյեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 38:

[6] Տե՛ս **Սրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 166-167:

սեռ դպրոցներ՝ 150-170 աշակերտներով և 80-90 աշակերտուհիներով[1]: Դպրոց ունեին նաև բողոքականները: Պ. Նաթանյանի տվյալների համաձայն՝ Բալուում կար 40 տուն բողոքական, որոնք ունեին ժողովարան, երկսեռ վարժարան՝ 80 աշակերտներով[2]: Ընդհանուր առմամբ, ըստ նրա տվյալների, Բալու քաղաքի «հայք հինգ հարիւր ութսուն եւ հինգ տունէ բաղկացեալ առանձին թաղ մը կը կազմեն, եւ ասոնց առհասարակ թիւը չորս հազար վեց հարիւր ութսուն երեք 4683 կը հաշուեն»[3]: Հեղինակի կարծիքով՝ քաղաքում ապրում էին նաև 7236 (1206 տուն) տաճիկներ[4]:

Գրեթե միևնույն ժամանակաշրջանին է վերաբերում անգլիացի գրող, ճանապարհորդ Հ. Թոզերի տվյալն առ այն, որ Բալուն մեծ քաղաք էր՝ 1500 տուն բնակչությամբ[5]: Բարեբախտաբար մեկ այլ օտարերկրացի՝ Հ. Լինչը, ևս տվյալներ է ներառել Բալուի վերաբերյալ: Նա գրում է, որ այն եղել է բարգավաճող բնակավայր՝ 2000 տուն՝ 10 000-ից 12 000 բնակչով, որից հայեր էին 600 տունը, մյուսները՝ քրդեր[6]: 1878-1890-ական թվականներին Բալու քաղաքի հայ բնակչության տներին առնչվող տվյալները տատանվում են 550-ից 600-ի, իսկ շնչերի թվաքանակը՝ 2500-ից 5000-ի սահմաններում, ընդ որում՝ գերակշռում էր վերջինը:

Անդրադառնանք Բալու գավառակի հայաշատ և համբավ ունեցող մի քանի բնակավայրերի ևս: Ամենանշանավոր գյուղը, թերևս, Հավավն էր, որը իր դիրքով, այգիներով, ջրառատությամբ առանձնանում էր: Այն խիստ զանազանվում էր նաև եկեղեցիների, հոգևորականների, վարժարանների որակով, հատկապես բնակիչների քաղաքավարությամբ, աշխատասիրությամբ և այլ հատկանիշներով: Ինչպես իրավամբ գրել է Գ. Սրվանձտյանցը, «Հաւաւ կրնար օրինակ հանդիսանալ գաւառաց ամէն գիւղաբնակ Հայոց»[7]:

Գ. Սրվանձտյանցին համակարծիք Պ. Նաթանյանը գրում է. «Հաւաւ գիւղը բոլոր Բալուայ նահանգի մէջ նշանաւոր եղած է, թէ քաջութեան, թէ ուսումնասիրութեան եւ թէ բարեպաշտութեան կողմանէ»[8]: Որոշ սկզբնաղբյուրներում գյուղն անվանվում է նաև՝ Հապապան: Մ. Տերոյանցի տվյալներով՝ այն ուներ 300-350 ընտանիք (բոլորը հայ), երկու եկեղեցի, մեկ երկսեռ դպրոց[9]: Ըստ Պ. Նաթանյանի՝ Հավավում բնակվում էր 180 տուն (1436 հայ)[10]: Մեծ համբավ ուներ և հայտնի ուխտատեղի էր Հավավի Քաղցրահայաց Ս.

---

[1] Տե՛ս **Տերոյեանց Մ**., նշվ. աշխ., էջ 42:
[2] Տե՛ս **Նաթանեան Պ**., նշվ. աշխ., էջ 46:
[3] Նույն տեղում, էջ 32:
[4] Նույն տեղում, էջ 48 (խոսքը առնչվում է թուրքերին):
[5] Տե՛ս **Tozer H**., Turkish Armenia and Eastern Asia Minor, London, 1881, p. 250:
[6] Տե՛ս **Lynch H**., նշվ. աշխ., էջ 391:
[7] Տե՛ս **Սրուանձտեանց Գ**., նշվ. աշխ., էջ 163:
[8] **Նաթանեան Պ**., նշվ. աշխ., էջ 61:
[9] Տե՛ս **Տերոյեանց Մ**., նշվ. աշխ., էջ 43:
[10] Տե՛ս **Նաթանեան Պ**., նշվ. աշխ., էջ 61:

Աստվածածին վանքը, որի մասին Գ. Սրվանձտյանցը գրել է. «Սիրուն է վանքիս դիրքը եւ իր շուրջ եղած այգիք, ծառաստանք եւ ջուրք կաւելցնեն վայելչութիւնը. իր առջեւ կը տարածուի գեղեցիկն Հաւաւ կանանչագեղ այգեստանեօք»[1]: Ցավոք, վանքի ներքին տեսքը, ըստ հեղինակի, ամենևին ոգևորող չէր, թեև այն ուներ բավականաչափ անշարժ գույք՝ տներ, անտառ, արտեր, այգիներ, քարհանք և անասուններ: Պ. Նաթանյանը գրում է, որ այդ վանքում կար 23 սենյակ, բայց «բոլորովին քայքայված, բացի երեքէն, որոց մին առաջնորդարանէ բաւական մեծ, երկրորդը՝ փոքրիկ, երկրորդ ձմերանոց, եւ երրորդն ամարանոց է»: Հեղինակի կարծիքով, եթե Քաղցրահայացն ունենա գործունյա և անշահախնդիր վանահայր, ապա վանքի ունեցվածքը մեծ հարստություն կբերի: Խոսքը հատկապես այգիների մասին է, որոնցից հավաքված խաղողը ժամանակին ամբարվել է հատուկ կառուցված հնձաններում և այնտեղից հատուկ խողովակներով տեղափոխվել վանքի տարածք: Պ. Նաթանյանը գրում է, որ այդ խողովակները տակավին պահպանված էին, սակայն՝ ավերակ վիճակում: Ըստ նրա՝ վանքի մատենադարանն ուներ 113 գիրք[2]:

Բալու գավառակի մյուս նշանավոր գյուղը Պաղինն էր, որը պատմական Պաղնատուն գավառակի տարածքում էր և Չորրորդ Հայքի մասն էր կազմում: Վ. Վալադյանը գրում է, որ գոյություն է ունեցել չորս Պաղին, մեկը՝ Բալու քաղաքից հյուսիս, մյուսը՝ հարավ-արևմուտք, երրորդը՝ հարավ, չորրորդը՝ Բերրի քաղաքի մոտակայքում՝ Բալուից հարավ[3]: Պաղինը զուտ հայաբնակ գյուղ էր, որը, ըստ Գ. Սրվանձտյանցի, 1878-1880 թթ. ուներ 170[4], իսկ 1890-ական թվականների սկզբներին՝ 150 տուն հայ բնակիչ[5]: Պաղինցիները հայտնի էին իրենց քաջությամբ, աշխատասիրությամբ, նաև ունևոր էին: Գյուղին նվիրված առանձին հուշամատյանում շեշտվում է այն հանգամանքը, որ այս տարածքում ևս ժողովրդագրական տեղաշարժերի հետևանքով նվազել էին թե՛ հայ բնակչության քանակը և թե՛ հայաբնակ բնակավայրերի թիվը: Մասնավորապես նշվում է. «Պաղինը շրջապատված էր բազմաթիւ քիւրտ գիւղերով, որոնք գրեթէ բոլորն ալ երբեմնի հայկական գիւղեր են եղած: Ատոնց հայ բնակիչները արշաւանքներու եւ ջարդերու հետեւանքով կամ կրօնափոխ եղած են բռնութեամբ եւ կամ բնաջնջուած եւ քիւրտերն եկած տիրացած են նախկին հայ գիւղերուն»[6]: Պաղինի մասին Մ. Տերոյանցը գրում է, որ յուրաքանչյուր տնից մեկ կամ երկու երիտասարդ մեկնում է ԱՄՆ՝ աշխատելու, երեք-չորս տարի անց վերադառնում մի շոշափելի գու-

---

[1] **Սրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 155-156:
[2] Տե՛ս **Նաթանեան Պ.**, նշվ. աշխ., էջ 16-22:
[3] Տե՛ս **Պատմութիւն Պաղնատան**, էջ 1-6:
[4] Տե՛ս **Սրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 167:
[5] Տե՛ս **Տերոյեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 45:
[6] **Պատմութիւն Պաղնատան**, էջ 17:

մար վաստակած, ինչպես նաև անգլերեն և ֆրանսերեն սովորած[1]: Նա փաստում է, որ արտագաղթը, սակայն, տվյալ ժամանակաշրջանում մեծ տարածում չուներ, իսկ մեկնողների նպատակը գումար վաստակելն էր և ծննդավայր վերադառնալը:

Պաղինցիների եկամտի գլխավոր աղբյուրը եղել է յաղճիությունը՝ յուղի առևտուրը: Յուղն իրենց արտադրանքը չէր. նրանք այն գնում էին քրդերից և վաճառում հեռավոր բնակավայրերում[2]: Ընդ որում պաղինցիները ոչ միայն կանխիկ գումարով էին գնում յուղը, այլև այն փոխանակում էին իրենց պատրաստած փայտե իրերի հետ: Յաղճիների աշխատանքը սկսվում էր մայիսին և տևում ամիսներ. քրդերի մոտից վերադառնում էին բեռներով և մի քանի օր անց շտապում վաճառելու յուղը: Վաճառում էին Բալուում, Խարբերդում, Մեզրեում, Ուրֆայում, Մարդինում, Սևերեկում, Տիգրանակերտում, Մալաթիայում: Վերադարձին գնում էին այնպիսի ապրանքներ, որոնք իրենց մոտ չկային, և դրանց մի մասը ևս վաճառում էին իրենց շրջակա բնակավայրերում: Յաղճիները ճանապարհ էին ընկնում խմբերով՝ քարավաններով: Քանի որ շրջակապատված էին անտառներով, ուստի Պաղնիում զարգացած էր ատաղձագործությունը: Նրանք զբաղվում էին նաև կավագործությամբ[3]:

Մ. Տերոյանցը որպես Բալուի գավառակի զուտ հայաբնակ գյուղ հիշատակում է Թուխեն, որն ուներ 70-80 ընտանիք, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրը բաղկացած էր 25-40 շնչից, նույնիսկ հինգ-վեց ընտանիք ունեին մինչև 200 անձ: Գյուղում կար եկեղեցի՝ Ս. Սարգիս անունով[4]: Սակայն մյուս հեղինակները նշում են գյուղի հայ բնակչության ավելի փոքր թվաքանակ. ընդ որում՝ գյուղում հիշատակվում են նաև քրդերը (տե՛ս աղյուսակը):

Ըստ Մ. Տերոյանցի՝ Բալուի հայաշատ բնակավայրերից էր Թիլ գյուղը՝ 200 տուն բնակչով, որից 100-ը հայ էին, 100-ը՝ մուսուլման[5]: Այս բնակավայրի դեպքում ևս մյուս հեղինակները նշում են անհամեմատ փոքր թվաքանակներ: Ստորև ներկայացվող աղյուսակում յուրաքանչյուր գյուղի վերաբերյալ առանձին սյունակներով տրվում են Պ. Նաթանյանի և Գ. Սրվանձտյանցի տվյալները:

---

[1] Տե՛ս **Տերոյեանց Մ**., նշվ. աշխ., էջ 45:
[2] Տե՛ս **Պատմութիւն Պաղնատան**, էջ 107:
[3] Նույն տեղում, էջ 109-110:
[4] Տե՛ս **Տերոյեանց Մ**., նշվ. աշխ., էջ 44:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 43:

Աղյուսակ

Բնակավայր Բալուի գավառակ	Պ. Նաթանյան[1] հայեր	Պ. Նաթանյան՝ մուսուլմաններ	Գ. Սրվանձտյ-անց[2]՝ հայեր
Մրջուման Մեզրե	44 տուն, 265 շունչ	-	27 տուն
Խամրշլը	11 տ., 70 շ.	-	11
Արթխան	31 տ., 263 շ.	-	34
Հավավ	180 տ., 1436 շ.	-	160
Ղարտպյորք/ Խարապորք	23 տ., 103 շ.	5 տ., 22 շ. քուրդ	23
Կրպո մեզրե/Կրբո	8 տ., 74 շ., նաև	թուրքեր	8
Օխու	27 տ., 205 շ.	16 տ., 85 շ. քուրդ	27
Թեբե/ Թափա	48 տ., 444 շ.	-	40
Տիլիմլի	4 տ., 36 շ.	4 տ. քուրդ, 20 շ. թուրք	4
Քուրտիքան	4 տ., 33 շ.	4 տ., 25 շ. քուրդ	4
Գումպեթ	23 տ., 167 շ.	-	20
Ղամպեր շեյխ	15 տ., 85 շ.	12 տ., 42 շ. քուրդ	3
Ճանիկ	25 տ., 75 շ.	-	
Պաղին	6 տ., 65 շ.	5 տ., 20 շ. քուրդ	
Քարնձոր	5 տ., 55 շ.	32 շ. զազա	
Իսնիս	3 տ.՝ 24 շ.	8 տ., 42 շ. զազա	
Տեմիրճի	6 տ., 56 շ.	14 տ. զազա	2
Ղարաղայա	4 տ., 35 շ.	10 տ.՝ 28 շ. զազա	1
Տևեճի	5 տ., 105 շ.	10 տ., 46 շ. քուրդ	15
Իսապեկ	30 տ., 240 շ.	-	30
Խոշմաթ	100 տ. ավել՝ 1027 / 1207 շ.	-	82
Նպշի	20 տ., 163 շ.	-	20
Նրխի	31 տ., 263 շ.	-	28
Ապրանք	20 տ., 165 շ.	-	20
Շնազ/Չինազ	53 տ., 420 շ.	-	45
Սղամ	42 տ., 216 շ.	-	35
Սազրաթ	44 տ., 656 շ.	-	55
Զեթ	62 տ., 754 շ.	-	70
Ուզուն Օվա	45 տ., 360 շ.	-	25
Ուզուն Օվա մեզրե	10 տ., 73 շ.	-	6
Կաճառ/Խաճառ	35 տ., 283 շ.	15 տ. քուրդ	15
Ավլավու (գուցե Քյանկառլու)	15 տ., 123 շ.	20 տ., 95 շ. քուրդ	20

[1] Տե՛ս **Նաթանեան Պ.**, նշվ. աշխ., էջ 66-89:
[2] Տե՛ս **Սրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 166-167:

Պաշարաթ	20 տ., 160 շ.	10 տ.՝ 50 շ. զազա	10
Հալալգոմ/Հազարգոմ	20 տ., 164 շ.	14 տ., 70 շ. զազա	20
Ղարակերիկ	10 տ., 82 շ.	7 տ., 40 շ. քուրդ	12
Կյուլիշկեր	40 տ., 320 շ.	-	20
Արմճան	50 տ., 425 շ.	-	47
Նոր գյուղի մեզրե	28 տ., 144 շ.	-	20
Դավթիք/ Դավթի Մրզա	22 տ., 176 շ.	-	24
Նորշինակ	8 տ., 48 շ.	-	5
Սրին	21 տ., 166 շ.	-	17
Պաղին	52 տ., 674 շ.	-	170
Նաճարան	24 տ., 207 շ.	10 տ., 73 շ. քուրդ	15
Թոխե/ Թրխե	33 տ., 225 շ.	2 տ., 16 շ. քուրդ	44
Թիլ	21 տ., 212 շ.	15 տ., 107 շ. քուրդ	25
Նորգեղ			18
Չայիրի Մեզրե			13
Խաջարի Մեզրե			2

Պ. Նաթանյանը որպես զուտ հայաբնակ հիշատակում է՝ Մրջուման Մեզրե, Խամըշլը, Արթխան, Հավավ, Թեբե/Թափա, Գումպեթ, Ճանիկ, Իսապեկ, Խոշմաթ, Նպշի, Նրխի, Ապրանք, Շնազ, Սղամ, Սագրաթ, Չեթ, Ուզուն Օվա, Ուզուն Օվա Մեզրե,Կյուլիշկեր, Արմճան, Նոր գյուղի Մեզրե, Դավթիք, Նորշինակ, Սրին, Պաղին գյուղերը: Խոշմաթ գյուղի հայության թվաքանակը նշելիս նա թույլ է տվել վրիպակ՝ տառերով գրել 1027, իսկ թվերով՝ 1207: Նա նաև նշում է, որ Խոշմաթում կա հոյակապ եկեղեցի, որը, սակայն, ողորմելի վիճակում է[1]: Գ. Սրվանձտյանցը հիշատակում է Նոր գեղ Չայիրի Մեզրե, Խաջարի Մեզրե բնակավայրերը, որոնք չկան Պ. Նաթանյանի մոտ:

Ամփոփելով նշենք, որ մինչև 1890-ական թվականների համիդյան կոտորածները Բալու գավառակում բնակվում էր ավելի քան 20 000 հայ բնակիչ:

Арпине Баблумян – ***Армянское население области Балу провинции Диарбекир (Тигранакерт) в 1878-1895 гг.***

Область Балу исторически была частью провинции Четвертая Армения (Софена) Великой Армении и с 1880-х годов входила в состав санджака Аргана Маден, провинции Диарбекир. В состав области Балу входило около 50 населенных армянами деревень, более 20 из которых были населены только армянами. В статье приведены статистические данные о численности армян в области в вышеуказанное время. В частности, по данным британского географа, путешественника Г. Линча, общее число населения области составляло 60 730 душ, численность армян была 15 150, мусульман – 45 580. В статье, опубликованной в журнале «Аракс», приводятся данные переписи, согласно ко-

[1] Տե՛ս **Նաթանեան Պ.**, նշվ. աշխ., էջ 74:

торой численность армян составляла 23 000 человек. Приведены также данные русского военного, вице-консула в Ване А.М. Колюбакина, других исследователей. В статье приведена таблица, в которой в отдельных столбцах представлены подробные данные о численности армян в населенных пунктах области, согласно данным П. Натаняна и Г. Срвандзянца. В целом, в области Балу в 1878-1895 гг. проживало более 20 000 армян.

Arpine Bablumyan – ***The Armenian Population of the Balu Region of Diarbekir Province (Tigranakert) in 1878-1895***

The Balu region was historically a part of the Forth Armenia (Sofena) of Greater Armenia and since 1880s was part of sanjak Argan Maden, Diarbekir province. The Balu region included about 50 villages inhabited by Armenians, more than 20 of which were inhabited only by Armenians. The article provides statistical data on the number of Armenians in the region at the above mentioned time. In particular, according to the data of the British geographer, traveler H. Lynch, the total population of the region was 60 730 souls, the number of Armenians was 15 150, Muslims – 45 580. In the article published in the "Araks" magazine there is census data, according to which the number of Armenians was 23 000. The data of the Russian military, vice-consul in Van A.M. Kolyubakin, and other researchers are also given. The article also contains a table in which the number of Armenians in the settlements of the region is presented according to the data of P. Natanyan and G. Srvandzyants. In general, more than 20 000 Armenians lived in the Balu region in 1878- 1895.

Ներկայացվել է 09.09.2019
Գրախոսվել է 30.09.2019
Ընդունվել է տպագրության 05.11.2019